

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դալարիկ գյուղական համայնքի ղեկավարի (2013 թվականի)

2013թ. ընթացքում Դալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 110 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 850 տեղեկանք, ստացել 85 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2013թ.-ի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները:

- Նախագինակոչային տարիքի պատանիներից 45-ը ներկայացել են Արմավիրի Զինկոմ և տարեկան զինակոչը գնահատվել է բավարար:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերներ՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Այժմ համայնքն ապահովված է մշտական ջրով, փոխվել է նոր պոլիէթիլենային խողովակներով խմելու ջրագծի 7500 մ հատվածը:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամյանակին:

- 2013 թվականի փետրվարի 18-ին կայացավ Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունները, որը անցավ հաշտ և խաղաղ մթնոլորտում և վերընտրվեց Սերժ Սարգսյանը:

2013թ.-ի ընթացքում համայնքի բյուջեի եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- ա) հողի հարկ - 8858.8 հազար դրամ,
- բ) գույքահարկ – 2607.2 հազար դրամ,
- գ) տեղական տուրք – 408.8 հազար դրամ,
- դ) պաշտոնական դրամաշնորհ – 53901.1 հազար դրամ,
- ե) ընթացիկ սուբվենցիա - 1688.1 հազար դրամ,
- զ) կապիտալ սուբվենցիա - 500.0 հազար դրամ,
- է) հողի օտարումից եկամուտ – 11780.9 հազար դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր.

ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 4800.0 հազար դրամ,

բ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1105.6 հազար դրամ,

գ) 11735.0 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

դ) 6653.2 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

- Համայնքում ճանապարհների ընթացիկ նորոգման համար ծախսվել է 990.0 հազար դրամ:

- Համայնքի բյուջեից 400.0 հազար դրամ նվիրատվություն է հատկացվել Հայաստանի մանուկներ հիմնադրամին՝ համայնքում «Ձեռներեցության ուսուցում և պրակտիկա պատանիների համար» ծրագիրն իրագործելու համար:

- Համայնքում մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 800.0 հազար դրամ:

- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:
- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:
- Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի տանիքները ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:
- Համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման ցանցը ունի վերանորոգման կարիք:

Դալարիկ համայնքի ղեկավար



Պ. Սաղաթեյան